ԻԶՈԿՈՆԱԶՈԼ **600** մգ

Դեղաձև. հեստոցային մոմիկներ 600 մգ:

Բաղադրություն. 1 մոմիկը պարունակում է ակտիվ նյութ իզոկոնազոլի նիտրատ 600 մգ:
Օժանդակ նյութ. ՊԷԳ 1500 և ՊԷԳ 400:

Դեղաբանական խումբ. Հակասնկային միջոց:

Դեղաբանական ազդեցություն
Իզոկոնազոլը հանդիսանում է իմիդազոլի ածանցյալ: Ցուցաբերում է տեղային հակասնկային և հակաբակտերիալ ազդեցություն: Ազդեցությունը ֆունգոստատիկ է: Ակտիվ է դերմատոֆիտների, բորբոսասնկերի, խմորասնկերի, ինչպես նաև գրամդրական բակտերիաների (ստաֆիլակոկեր, միկրոկոկեր, ստրեպտոկոկեր) նկատմամբ: Արգելակում է էրգոստերոլի սինթեզը և խախտում է մանրէի բջջաթաղանթի բաղադրությունն ու ամբողջականությունը:

Կիրառման ցուցումներ
Հեստոցի սնկային ինֆեկցիաներ, այդ թվում նաև գրամդրական բակտերիաների կողմից հարուցված համակցված ինֆեկցիաներ:

Հակացուցումներ
Գերզգայունություն ակտիվ նյութի կամ օժանդակ նյութերից որևէ մեկի նկատմամբ:

Կիրառման ձև և դեղաչափում
Հեստոցային մոմիկները դնում են հեստոցի մեջ խորը: Ցանկալի է մոմիկը կիրառել երեկոյան՝ քնելուց առաջ, պառկած վիճակում: Ցուցված դեղաչափը՝ 1 մոմիկ: Օգտագործման հարմարավետության համար պետք է օգտագործել տուփի մեջ առկա մատնոցները: Անհրաժեշտության դեպքում կարելի է կրկնել կուրսը 7-10 օր հետո: Խորհուրդ չի տրվում բուժումը կատարել դաշտանային ցիկլի ընթացքում:

Կողմնակի ազդեցություն
Կիրառման ժամանակ կարող են նկատվել տեղային ռեակցիաներ՝ գրգռվածություն, քոր և այտուց:
Հազվադեպ հնարավոր է ալերգիկ ռեակցիա դեղի կիրառման տեղում:

Նախազգուշացումներ
Բուժման ընթացքում խորհուրդ չի տրվում իրականացնել հոգնա, ինչպես նաև բուժումը ավարտելուց 1 շաբաթ հետո:

Արդյունավետ բուժման և վարակի կրկնումից խուսափելու համար խորհուրդ է տրվում ամեն օր փոխել և եռացնել անձնական օգտագործման ներբճաշորերը (սպիտակեղեն, ներբճաշորեր - ցանկալի է բամբակից)։ Խորհուրդ է տրվում կատարել զուգընկերոջ միաժամանակյա բուժում։

Հղիություն և կրծքով կերակրում

Հղիության ընթացքում իզոկոնազոլ պարունակող դեղերի օգտագործման փորձը չի վկայում մարդկանց մոտ տերատոգենության ռիսկի մասին:

Շատ փոքր կլանման (5%-ից պակաս) և թերապիայի շատ կարճ տևողության պատճառով հնարավոր է բացառել կրծքով կերակրվող երեխայի համար մոր կաթում դեղորայքային նյութի ընդունումից առաջացած վնասի հավանականությունը:

Թողարկման ձև

1 հեշտոցային մոմիկ խցիկում, 2 մատնոցով, 1 խցիկ ստվարաթղթե տուփի մեջ:

Պիտանիության ժամկետ

3 տարի:

Պահպանման պայմաններ

Պահել +30°C-ից ոչ բարձր ջերմաստիճանում, երեխաների համար անհասանելի վայրում։

Բացթողման կարգ

Բժշկի ցուցումով: